

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 11/2

5 օգոստոսի 2014 թ.

Քննարկվեց «Ձեթ ԻՔՍ ԳԱՐԱԺ» ՍՊԸ 24.07.2014 թ-ի գրությամբ բերված գանգատը ՀՀ ՖՆ էրեբունու ՀՏ 14.07.2014 թ-ի թիվ 6100858 ստուգման ակտի դեմ:

**«Ձեթ Իքս Գառաժ» ՍՊԸ գրությունում բերված փաստարկները.**

ՀՀ ՖՆ էրեբունու հարկային տեսչության պետի 19.06.2014 թ-ի թիվ 6200896 հանձնարարագրով «Ձեթ ԻՔՍ ԳԱՐԱԺ» ՍՊԸ-ում իրականացվել է հսկիչ գնում, որի արդյունքում կազմվել է թիվ 6200896 արձանագրությունը:

Արձանագրությունում նշվել է, որ «Ձեթ ԻՔՍ ԳԱՐԱԺ» ՍՊԸ-ին պատկանող ավտոտեխսպասարկման կետում գտնվող վաճառքի կետից կատարվել է հսկիչ գնում 200 դրամ արժողությամբ՝ մեկ շիշ ջուր, որի դիմաց վճարված գումարը չի մուտքագրվել ՀԴՄ և համապատասխան գործարքի համար ՀԴՄ կտրոն չի տրամադրվել, սկզբնական ու վերջնական Z հաշվետվությունների միջև առկա է եղել 200 դրամի տարբերություն, որն էլ եղել է այդ չմուտքագրված գումարը և այն տեսուչների պահանջով մուտքագրվել է:

Վերը նշվածի արդյունքում ընդունվել է վերոգրյալ ակտը, որով ընկերությանը տուգանվել է 150.000 դրամ:

ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 5-րդ, 33.1-րդ հոդվածների համադրության արդյունքում պարզ է դառնում, որ պետությունը ստանձնելով պոզիտիվ պարտավորություն սահմանադրի առջև Սահմանադրության ուժով պարտավորվում է գործել միայն Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, միաժամանակ կաշկանդված լինելով անձի հիմնարար իրավունքներով և ազատություններով, որպես ամիջականորեն գործող իրավունք, որպիսին է նաև նույն 33.1 հոդվածով ամրագրված անձի ծեռնարկատիրությանը զբաղվելու և մենաշնորհից, գերիշխող դիրքի չարաշահումից և անբարեխիղճ մրցակցությունից պաշտպանված լինելու իրավունքը, ինչից հետևում է, որ պետությունը պարտավոր է թե օրենսդրի, թե գործարդի միջոցով ոչ միայն պաշտպանել իրավունքները, այլ իրենց գործունեությունն իրականացնել կաշկանդված լինելով այդ իրավունքներով և ազատություններով:

Գանգատում մեջբերվել են նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 295-րդ, 470-րդ, 508-510-րդ հոդվածների դրոյթները:

Տեսուչների կողմից կազմված արձանագրության ընթացակարգային-նկարագրական մասում մի քանի անգամ շրջափվում են առուվաճառքի գործարքի տարրեր, սակայն «Ձեթ ԻՔՍ ԳԱՐԱԺ» ՍՊԸ-ի հիմնական գործունեությունը, որով նա հայտնի է որպես քաղաքացիական (գործարար) շրջանառության մասնակից, ավտոպահեստամասերի ներմուծումն է, այդ գույքի մանրածախ և մեծածախ առուվաճառքը, այլ ոչ թե սեփական սպասարկման սրահում հանրային սննդի կազմակերպումը: Հարկ է նշել, որ գնորդի կարգավիճակ կարող է ունենալ միայն առուվաճառքի գործարքի (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 470-րդ հոդված) սուբյեկտը, ինչպես պայմանագրի ուժով, այնպես էլ կոնկրետ գործողությունների միջոցով (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 295-րդ հոդված): Անհրաժեշտ է նշել, որ արձանագրության մեջ ամբողջ փաստական հանգամանքներն ամրագրված չեն սպասարահում առկա է հասանելի վայրում տեղադրված ցուցանակ, որում հստակ նշված է, որ սառը ջուրը տրամադրվում է անվճար, ինչն արդեն ուղղակիորեն բացառում է առուվաճառքի գործարքի փաստակազմը: Նշված գործարքն իրենից ներկայացնում է գույքի անհատույց օտարման միակողմանի գործարք հրապարակային օֆերտայի միջոցով (ՀՀ

քաղաքացիական օրենսգրքի 510-րդ հոդվածի 2-րդ մաս): Նշված ապրանքների անվճար լինելու հանգամանքը բացառում է նաև «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի փաստակազմի առկայությունը: Հետևաբար, 510-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված բացառության ուժով բացառվում է 509-րդ հոդվածով նախատեսված դրամարկղային չեկի (կտրոնի) տրամադրման պարտավորությունը, քանի որ նախ չկա պատշաճ սուբյեկտ, կողմ (վաճառող), որն հանձնի գույքը որոշակի գումարի դիմաց: Նշված 200 դրամ գումարն իրենից ներկայացնում ոչ թե գումարի փոխանցում որոշակի ապրանքի դիմաց, այլ՝ թեյավճար:

200 դրամի մուտքագրումը ՀԴՄ պայմանավորված է հարկային տեսուչների պահանջով (ինչպես նշված է արձանագրության մեջ), քանի որ հակառակ վարքագիծը (պահանջը չկատարելը) կարող է ընկալվել կամ մեկնաբանվել, որպես «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի, այն է՝ տնտեսավարող սուբյեկտի պաշտոնատար անձինք պարտավոր են՝ չխոչընդոտել ստուգումների ընթացքին, կատարել ստուգումն իրականացնող անձանց օրինական պահանջների խախտում, ուստի բողոք բերող անձը նախատեսել է իր իրավունքների պաշտպանության ինստիտուցիոնալ տարբերակ և հարկային մարմնի գործողությունների իրավաչափությունը պարզել տվյալ հանձնաժողովում, իսկ ինչ վերաբերվում է ապացուցողական բեռի բաշխմանը, ապա վկայակոչում ենք «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել: Արգելվում է անձանցից պահանջել իրենց ներկայացրած տվյալները, տեղեկությունները հավաստող փաստաթղթեր կամ լրացուցիչ տեղեկություններ, եթե այդ պահանջը սահմանված չէ օրենքով:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ վարչարարություն իրականացնող մարմինը դրսևորել է ակնհայտ կամայականություն, որը որպես հետևանք առաջացնում է ՀՀ Սահմանադրության 33.1-րդ հոդվածով նախատեսված հիմնարար իրավունքների իրական վտանգ, քանի որ նշված արձանագրության հիման վրա կարող է կիրառվել վարչական և հարկային օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվություն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ, 31-րդ, 46-րդ, 63-րդ հոդվածներով ընկերությունը խնդրում է անվավեր ճանաչել և վերացնել ՀՀ ՖՆ Էրեբունու ՀՏ 14.07.2014 թ-ի թիվ 6100858 ստուգման ակտը:

**ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ համաձայն Էրեբունու ՀՏ պետի 19.06.2014 թ-ի թիվ 6200896 հանձնարարագրի «Ձեթ ԻՔՍ ԳԱՐԱԺ» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում): Արդյունքում, 26.06.2014 թ-ին կազմվել է հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 6200896 արձանագրությունը, որում մասնավորապես նշվել է.

ՀՀ ՖՆ Էրեբունու ՀՏ հարկային տեսուչ Արթուր Շահմուրադյանը 26.06.2014 թ-ին, ժամը 17:45-ին ք.Երևան, Արշակունյաց 11 հասցեում գտնվող «Ձեթ ԻՔՍ ԳԱՐԱԺ» ՍՊԸ-ին պատկանող ավտոտեխնասարկման կետում գտնվող վաճառքի կետից կատարել է հսկիչ գնում 200 դրամ արժողությամբ (1 շիշ ջուր), որի դիմաց վճարված կանխիկ գումարը չմուտքագրվեց ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրվեց: Ժամը 14:47-

ին ՀԴՄ-ից դուրս է բերվել Z հաշվետվություն, որում հասույթը կազմել է 216500 դրամ: Տեսուչների պահանջով չմուտքագրված գումարը՝ 200 դրամը, ժամը 17:48-ին մուտքագրվել է ՀԴՄ, նորից դուրս է բերվել Z հաշվետվությունը՝ գումարով 216700 դրամ: Գնված ապրանքը հարկային տեսուչների կողմից հետ է վերադարձվել:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ «ՁԵԹ ԻՔՍ ԳԱՐԱԺ» ՍՊԸ կողմից խախտվել են ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջները, որն առաջացնում է պատասխանատվություն «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ ՖՆ Էրեբունու ՀՏ պետի կողմից 30.06.2014 թ-ին հրապարակվել է թիվ 6100858 հանձնարարագիրը, որի համաձայն «ՁԵԹ ԻՔՍ ԳԱՐԱԺ» ՍՊԸ-ում իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Էրեբունու ՀՏ 14.07.2014 թ-ի թիվ 6100858 ստուգման ակտը, որով գանձման է առաջադրվել 150.000 դրամ:

Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում հսկիչ գնումն իրականացնող պաշտոնատար անձանց կատարած համապատասխան գործողությունների արդյունքում ձեռք բերված ապացույցները հիմնավորում են հսկիչ գնմամբ ձեռք բերված ապրանքի դիմաց վճարված գումարը ՀԴՄ չմուտքագրվելու և համապատասխան ՀԴՄ կտրոն չտրամադրելու փաստը: Մասնավորապես, հսկիչ գնումից հետո՝ ժամը 14:47-ին, ՀԴՄ-ից դուրս է բերվել Z հաշվետվություն, որում կատարված վճարման արժեքը ներառված չի եղել: Այնուհետև կատարված վճարման արժեքը մուտքագրվել է ՀԴՄ, դուրս է բերվել կտրոն և ժամը 17:48-ին կրկին անգամ դուրս է բերվել Z հաշվետվությունը:

Բացի այդ, ղեկավարվելով ՀՀ կառավարության 27.11.2003 թ-ի թիվ 1561-Ն որոշմամբ հաստատված կարգի 6.1 կետի դրույթներով ուսումնասիրությունն իրականացնող պաշտոնատար անձինք վերադարձրել են հսկիչ գնմամբ ձեռք բերված ապրանքը, որի վերաբերյալ 26.06.2014 թ-ին կազմվել է հսկիչ գնումների արդյունքում վաճառված ապրանքների հետընդունման թիվ 6200896 ակտը: Ընդ որում հարկ է նշել, որ վաճառված ապրանքների հետընդունման նշված ակտը ստորագրված է վերոգրյալ 1 շիշ ջրի վաճառքն իրականացրած վաճառող Էլմիրա Ասատրյանի կողմից՝ չունեն առարկություն նշագրմամբ:

Հանձնաժողովը գտնում է, որ վերոգրյալ փաստական հանգամանքները հիմնավորում են ընկերության կողմից ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջները խախտած լինելու հանգամանքը, որն իր հերթին առաջացնում է պատասխանատվություն «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

## ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Ստուգման ակտը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ